

## ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ծաղկաբեր համայնքի ավագանու հերթական նիստի և համայնքային նշանակության միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսների, հանրային քննարկումների) վերաբերյալ

| Համայնք  | Միջոցառման անվանումը   | Օրը         | Ժամը  | Անցկացման վայրը                                           |
|----------|------------------------|-------------|-------|-----------------------------------------------------------|
| Ծաղկաբեր | Ավագանու հերթական նիստ | 17.02.2021թ | 11.00 | Ծաղկաբերի համայնքապետարան (գ. Ծաղկաբեր, 2 փողոց, 12 շենք) |

## Նախագիծ

Ծաղկաբեր համայնքի ավագանու 2021թ.  
փետրվարի 17-ի հերթական նիստի օրակարգը  
հաստատելու մասին

Ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ  
մասով՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ծաղկաբեր համայնքի ավագանու 2021թվականի փետրվարի 17-ի հերթական  
նիստի օրակարգը

### Օրակարգ

1. Ծաղկաբեր համայնքի 2020թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման  
հնգամյա ծրագրի իրականացման հաշվետվության մասին :

Զեկ. Հ. Հովհաննիսյան

- 2 . 2021թվականի տարեկան աշխատանքային պլանի մասին:

Զեկ. Հ. Հովհաննիսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«17» **փետրվարի** 2021 թվական N 3-Ա

**ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ  
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ծաղկաբեր համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի :
2. Հաստատել 2020 թվականի Ծաղկաբեր համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

## Հաշվետվություն

### **Ծաղկաբեր համայնքի 2017-2021թթ զարգացման հնգամյա ծրագրով 2020թվականի նախատեսված աշխատանքների կատարման մասին**

Ծաղկաբեր համայնքի 2017-2021թթ զարգացման հնգամյա ծրագրով նախատեսվել են մի շարք ծրագրեր, որոնց իրականացումը հիմք է հանդիսանում համայնքի կայուն զարգացման համար: 2020թվականի նախատեսվել է իրականացնել 11 ծրագիր: Այդ ծրագրերի իրականացումը տարվա սկզբից եղել են համայնքի ղեկավարի և աշխատակազմի աշխատանքների առաջնահերթություն: Երկու ծրագիր հաստատվել է որպես սուբվենցիոն, որոնց համար ժամանակին նախապատրաստվել են նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:

Համայնքի բյուջեից սուբվենցիոն ծրագրերին հատկացվել են 10.136.0 հազ. դրամ: Պետության կողմից սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորմանը հատկացվել է 11.577.5 հազ. դրամ:

2020 թվականին համայնքի բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվել է 66.827.0 հազ. դրամ աշխատանքներ համայնքային տարբեր ոլորտների խնդիրների լուծման համար: Սուբվենցիոն առաջին ծրագրով կառուցվել է 3-րդ փողոցում 555մ. խմելու ջրի ջրագիծ, 1-ին փողոցի 6-րդ փակուղում 220մ. ջրագիծ:

Սուբվենցիոն երկրորդ ծրագրով 2-րդ փողոցում կառուցվել է 470մ. ջրահեռացման համակարգ,

1-ին փողոց 6-րդ փակուղում 220մ. ջրահեռացման համակարգ, որոնք կծառայեն նաև ոռոգման համար:

Զբաղվածության տարածքային կենտրոնի և համայնքի համատեղ ֆինանսավորմամբ (3.694.86 հազ. դրամ) մասնակի նորոգվել է համայնքի մանկապարտեզը և խաղահրապարակը:

2020 թվականին ամբողջությամբ ավարտվեց Մեծ Պարնի - Ծաղկաբեր ժամապարհի վերակառուցումն ու ասվալտապատումը, որի արդյունքում համայնքի ներսում կատարվել է 1900մ. թողոցների վերակառուցում և ասվալտապատում, կառուցվել է մեկ կամուրջ, վերանորոգվել է ևս մեկ կամուրջ: Այս աշխատանքներն ամբողջությամբ պոտոնական ֆինանսավորմամբ:

Երկրաշարժից բնակարան կորցրած 5 ընտանիքների համար կառուցվել է տներ, բնակարանի գնման վկայագիր են ստացել 5 ընտանիք:

2017-2021թթ զարգացման հնգամյա ծրագրով նախատեսվել է ոռոգման ջրամբարի, ոռոգման ջրանցքի, դպրոցի նոր մասնաշենքի և համայնքային կենտրոնի կառուցում՝ պետության կողմից ակնկալվող ֆինանսավորմամբ, արդեն ավարտին է մոտենում հնգամյա ծրագիրը, սակայն նշված կառույցների վերաբերյալ առայժմ գործնական ոչինչ արված չէ:

Ստորև բերվում է աղյուսակ ըստ ոլորտների կատարված աշխատանքների անվանումներով նախատեսված և փաստացի ֆինանսական հատկացումների ցուցանիշներով:

Աղյաուսկ1

Ծաղկաբեր համայնքի 2017-2021թթ զարգացման հնգամյա ծրագրով 2020թ համայնքի բյուջեի և այլ աղբյուրների ֆինանսավորմամբ նախատեսված աշխատանքների կատարման

| Հ/Հ | Կատարած աշխատանքի անվանումը                                                                     | Ծրագրով<br>նախատեսված<br>(հազար դրամ) | Փաստացի<br>կատարված<br>(հազար դրամ) |
|-----|-------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------|-------------------------------------|
| 1.  | Համայնքապետարանի<br>աշխատակազմի պահպանում,<br>հանրությանը որակյալ<br>ծառայությունների մատուցում | 20.500.0                              | 24.283.0                            |
| 2.  | Նախադպրոցական կրթություն                                                                        | 5.000.0                               | 0                                   |
| 3.  | Համայնքի աղբահանություն                                                                         | 976.0                                 | 960.0                               |
| 4.  | Տրանսպորտ, ճանապարհային<br>տնտեսություն                                                         | 2.000.0                               | 797.0                               |
| 5.  | Միջնակարգ կրթություն                                                                            | 1.000.0                               | 699.0                               |
| 6.  | Բարձրագույն կրթություն                                                                          | 1.000.0                               | 340.0                               |
| 7.  | Սոցիալական պաշտպանություն,<br>հարազատներին հուղարկավորության<br>օգնություն                      | 1.000.0                               | 730.0                               |
| 8.  | Զրամատակարարում                                                                                 | 2.900.0                               | 7.089.5                             |
| 9.  | Շինարարություն և հիմնական նորոգում                                                              | 2.000.0                               | 3.694.86                            |
| 10. | Աղետների ռիսկերի նվազեցում ԱԻ ևՔՊ<br>միջոցառումներ                                              | 1.000.0                               | 15.372.5                            |
| 11. | Համայնքում ծնելիության և<br>բազմազավակության խթանում                                            | 200.0                                 | 140.0                               |

Աղյուսակ 2

2017-2021թթ համայնքի զարգացման հնգամյա ծրագրով 2020թվականի համար ֆինանսական  
կանխատեսումների և փաստացի կատարման (հազար դրամ)

| Հ/Հ | Եկամուտի տեսակը                  | 2020թ                 |                        |                     |
|-----|----------------------------------|-----------------------|------------------------|---------------------|
|     |                                  | Ծրագրով<br>նախատեսված | Բյուջեով<br>նախատեսված | Փաստացի<br>կատարված |
|     | Եկամուտներ՝ ընդամենը             | 36.224.0              | 65.273.3               | 66.826.9            |
| 1.  | Հարկային եկամուտներ՝<br>ընդամենը | 7.184                 | 9.076.0                | 9.177.1             |
| 1.1 | Հողի հարկ                        | 3.800.0               | 3.700.0                | 3.807.1             |
| 1.2 | Գույքահարկ                       | 3.300.0               | 5.334.0                | 5.334.0             |
| 1.3 | Տեղական տուրքեր                  | 84.0                  | 42.0                   | 36.0                |
| 2.  | Ոչ հարկային եկամուտներ           | 2.040.0               | 21.744.0               | 23.024.0            |
| 2.1 | Հողի վարձավճարներ                | 740.0                 | 921.0                  | 1022.1              |
| 2.2 | Ոչ հարկային այլ<br>եկամուտներ    | 1.300.0               | 20.823.1               | 22.218.5            |
| 3.  | Դոտացիա                          | 27.000.0              | 28.300.3               | 28.256.3            |
| 4.  | Տարեսկզբի ազատ մնացորդ           | 0                     | 6.152.9                | 6.152.9             |

2020թվականին սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 102.4%

Նախագիծ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«17» **փետրվար** 2021 թվական N 4-Ա

**ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացրած համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակման մեթոդական ուղեցույցը՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Ծաղկաբեր համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝  
համաձայն հավելվածի :